ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEF4-957B-4B14-B058 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/1827/02/24

ՈՐՈՇՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԳՈՐԾԸ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17.06.2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ՝ նաև Դատարան), քննարկելով ըստ հայցի «ՄՏԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Հայցվոր) ընդդեմ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Պատասխանող)՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կարիքների համար «G4 և G6 տեսակի բնական գազի կենցաղային հաշվիչների» ձեռքբերման նպատակով հայտարարված «№099/GArm/24_4.3_016/05.03.24» ծածկագրով մրցակցային ընտրության անցկացման ընթացքում նախնական ընտրության 1-ին փուլի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և գործը դատական նիստում քննելու հարցերը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կարիքների համար «G4 և G6 տեսակի բնական գազի կենցաղային հաշվիչների» ձեռքբերման նպատակով հայտարարված «№099/GArm/24_4.3_016/05.03.24» ծածկագրով մրցակցային ընտրության անցկացման ընթացքում նախնական ընտրության 1-ին փուլի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացվել է 14.03.2024 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/1827/02/24 քաղաքացիական գործը, որը 14.03.2024 թվականին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Թ. Ղուկասյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Թ. Ղուկասյան) 19.03.2024 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Թ. Ղուկասյան) 30.04.2024 թվականի վճռով «ՄՏԿ» ՓԲ ընկերության հայցն ընդդեմ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարիքների համար «G4 և G6 տեսակի բնական գազի կենցաղային հաշվիչների» ձեռքբերման նպատակով վերջինիս կողմից հայտարարված «№099/GArm/24_4.3_016/05.03.24» ծածկագրով մրցակցային ընտրության անցկացման ընթացքում նախնական ընտրության 1-ին փուլի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարվել է:

Պատասխանողի ներկայացուցչի կողմից 20.05.2024 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Թ. Ղուկասյան) 30.04.2024 թվականի վճռի դեմ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.12.2024 թվականի որոշմամբ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության անունից բերված վերաքննիչ բողոքը բավարարվել է, թիվ ԵԴ2/1827/02/24 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 30.04.2024 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

Թիվ ԵԴ2/1827/02/24 քաղաքացիական գործը 14.05.2025 թվականին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Գ. Վարդանյան) 16.05.2025 թվականի որոշմամբ թիվ ԵԴ2/1827/02/24 քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Գ. Վարդանյան) 07.07.2025 թվականի վճռով «ՄՏԿ» ՓԲ ընկերության հայցն ընդդեմ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կարիքների համար

«G4 և G6 տեսակի բնական գազի կենցաղային հաշվիչների» ձեռքբերման նպատակով հայտարարված «№099/GArm/24_4.3_016/05.03.24» ծածկագրով մրցակցային ընտրության անցկացման ընթացքում նախնական ընտրության 1-ին փուլի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարվել է:

Պատասխանողի ներկայացուցչի կողմից 08.08.2025 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Գ. Վարդանյան) 07.07.2025 թվականի վճռի դեմ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.03.2026 թվականի որոշմամբ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության անունից բերված վերաքննիչ բողոքը բավարարվել է, թիվ ԵԴ2/1827/02/24 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 08.07.2025 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

Թիվ ԵԴ2/1827/02/24 քաղաքացիական գործը 12.06.2026 թվականին, ժամը 21:30 րոպեին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին, իսկ հասանելի է դարձել **<u>15.06.2026 թվականին</u>**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե սույն գլխով առանձնահատկություններ սահմանված չեն, ապա Համակարգի միջոցով իրականացվող գործողությունների վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 411-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին դատական ակտ կայացնելու դեպքում դատարանը գործն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

2. Գործը վարույթ ընդունելու մասին որոշումը ուղարկվում է գործին մասնակցող անձանց:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են

հաստատված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1**) դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ.**

2) ներկայացվել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն.

3) հայցվորը հրաժարվել է պահանջից:

2. Գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

3. Գործը դատական նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

4. Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Տվյալ դեպքում Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը պետք է ընդունել վարույթ և հիմք ընդունելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.12.2024 թվականի և 13.03.2026 թվականի որոշումներով արտահատած դիրքորոշումները՝ պատասխանող «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունից պետք է պահանջել «№099/GArm/24_4.3_016/05.03.24» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող՝ **փոփոխված հայցադիմումի մասով** բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

Բացի այդ, Դատարանը ներկայացված հայցադիմումի ուսումնասիրության արդյունքում եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված բոլոր հանգամանքների վերաբերյալ, հետևաբար անհրաժեշտ է սույն գործի քննությունն իրականացնել դատական նիստում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Ըստ հայցի «ՄՏԿ» փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ

«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կարիքների համար «G4 և G6 տեսակի բնական գազի կենցաղային հաշվիչների» ձեռքբերման նպատակով հայտարարված «№099/GArm/24_4.3_016/05.03.24» ծածկագրով մրցակցային ընտրության անցկացման ընթացքում նախնական ընտրության 1-ին փուլի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործն ընդունել վարույթ:

2.«Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունից պահանջել «№099/GArm/24_4.3_016/05.03.24» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող՝ **փոփոխված հայցադիմումի մասով** բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

4. Հրավիրել դատական նիստ՝ **14.07.2026 թվականին, ժամը 12:00-ին** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Աջափնյակ-2 նստավայրի վարչական շենքում **(հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41ա, 11-րդ հարկ, դատական նիստերի դահլիճ թիվ 9):**

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am